

ԿԱՐԵԼԻ՞ Է ԱՅՍՔԱՆ ԱՆԳՈՒԹ ԸԼԼԱԼ

Posted on December 23, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Ոսկան Մխիթարեան, Լոս Անճելըս, 20 Դեկտեմբեր 2018

Դիտեցէ՛ք պահ մը այս [տեսաերիզը](#), եւ փորձեցէք ջուզուիլ: Նայեցէ՛ք փոքրիկ աղջկան արցունքոտ աչքերուն մէջ եւ փորձեցէք չհեկեկալ եթէ կարող էք: Իսկ եթէ պատահի որ ջուզուիք, կը նշանակէ որ քարացած է ձեր սիրտը եւ պարպուած էք մարդկային ամեն տեսակի կարեկցութենէ:



Ահաւասիկ հայրենաբնակ հայ ընտանիքի ողբերգութեան մեծագոյնը, եւ այդ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անմիջական հարեւանութեամբ: Որքա՛ն քարացած պէտք է ըլլան ձեր սրտերը, «հոգեւոր» հայրե՛ր, որ թոյլ կու տան ձեր արժանապատուութեան՝ անտարբերութեամբ մօտենալու այս կարօտեալ ընտանիքին: Ո՞ր են Պէնթի եւ Մերսէտես քշող այդ յղփացած եպիսկոպոսները: Ո՞ր են Փիէր Քարտէն եւ Նմանօրինակ անուանի մակնիշներով զգեստ հագուող շփացած եպիսկոպոսները: Ո՞ր են անուշահոտերով իրենց շրջապատը առիւնքնել փորձող բարձրաստիճան եւ փոքրաստիճան եկեղեցականները: Ո՞ր են մամոնայապաշտ եկեղեցականները, որոնք կը հպարտանան իրենց դրամատան հաշիւներով միայն:

Ոսկան Մխիթարեան, Լոս Անճելըս, 20 Դեկտեմբեր 2018

Դիտեցէ՛ք պահ մը այս [տեսաերիզը](#), եւ փորձեցէք ջուզուիլ: Նայեցէ՛ք փոքրիկ աղջկան արցունքոտ աչքերուն մէջ եւ փորձեցէք չհեկեկալ եթէ կարող էք: Իսկ եթէ պատահի որ ջուզուիք, կը նշանակէ որ քարացած է ձեր սիրտը եւ պարպուած էք մարդկային ամեն տեսակի կարեկցութենէ:



Ահաւասիկ հայրենաբնակ հայ ընտանիքի ողբերգութեան մեծագոյնը, եւ այդ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անմիջական հարեւանութեամբ: Որքա՛ն քարացած պէտք է ըլլան ձեր սրտերը, «հոգեւոր» հայրե՛ր, որ թոյլ կու տան ձեր արժանապատուութեան՝ անտարբերութեամբ մօտենալու այս կարօտեալ ընտանիքին: Ո՞ր են Պէնթի եւ Մերսէտես քշող այդ յղփացած եպիսկոպոսները: Ո՞ր են Փիէր Քարտէն եւ Նմանօրինակ անուանի մակնիշներով զգեստ հագուող շփացած եպիսկոպոսները: Ո՞ր են անուշահոտերով իրենց շրջապատը առիւնքնել փորձող բարձրաստիճան եւ փոքրաստիճան եկեղեցականները: Ո՞ր են մամոնայապաշտ եկեղեցականները, որոնք կը հպարտանան իրենց դրամատան հաշիւներով միայն:

Կարելի է երկարել շարքը... բայց անցնինք մեր վերլուծումին: Այս ի՛նչ վերաբերում է իր ազգին նուիրուած հաշմանդամ մարտիկ-զինուորին հանդէպ: Որո՞նք պիտի հոգան այս ընտանիքին կարիքները՝ եթէ ոչ նո՛յնինքն պետութիւնը եւ անոր յարակից բարեսիրական ծառայութեան գրասենեակները: Ինչպէ՛ս կարող ենք այսօր սառն

արհևնով դիտել տառապանքը այս հաշմանդամ մարտիկին, որ պատրաստ էր իր արհևնը շաղախել հայրենի հողին, անոր պաշտպանութեան սիրոյն: Ո՞ր է Մանուէլ Գրիգորեանի գողցած աւարը: Ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ Գրիգորեաններ պալատներու մէջ ապրին՝ իւլելով զինուորներու արդար իորաւունքները, իսկ այս քաջարի մարտիկը միջոց չունենայ իրեն հարկաւոր դեղորայքը գնելու:

Հաւանաբար շատեր առարկեն, թէ ի՞նչ կայ այդքան զարմանալի, երբ երկրաշարժէն երեսուն տարիներ ետք Կիւմրի քաղաքը, Վանաձորն ու Սպիտակը տակաւին աւերակներու մէջ են ու բազմաթիւ ընտանիքներ կ'ապրին ծայրագոյն աղքատութեան մէջ, թիթեղածածկ անփառունակ խրճիթներու մէջ, մարդկային կենցաղի տարրական բոլոր միջոցներէն զրկուած ըլլալով:

Որքա՞ն խօսուն են վարչապետի տեղակալ Նիկոլ Փաշինեանի խօսքերը. «*աղետի պատճառած ամենամեծ վնասը թերեւս մարդկանց հոգիներում տեղի ունեցած աւերածութիւններն էին: Երկրաշարժից շատ չանցած սկսուեցին գօտու վերականգնման աշխատանքները, բայց միշտ չէ, որ շէնքերին զուգընթաց վերականգնոււմ էին մարդկանց յոյսը, վստահութիւնն ու լաւատեսութիւնը, եւ երբ ասում ենք աղետի գօտի, առաջին հերթին հէնց սա պիտի նկատի ունենանք: Երբ ասում ենք աղետի գօտի, առաջին հերթին պետք է նկատի ունենանք, թէ ինչքանով է վերականգնուած մարդկանց վստահութիւնը սեփական ուժերի նկատմամբ, ինչքանով է վերականգնուած լաւատեսութիւնը վաղուայ օրուայ նկատմամբ, ինչքանով է վերականգնուած յոյսը, որ զոհերի կիսատ թողնուած գործերը եւ երազանքները կը դառնան իրականութիւն: Հէնց աղետի գօտու վերականգնման այսպիսի հայեցակարգն է առաւել կարեւորը եւ անհրաժեշտը: Եւ ես յոյս ունեմ եւ համոզուած եմ, որ Հայաստանում տեղի ունեցող գործընթացներն առաջին հերթին հէնց ծառայում են եւ պիտի ծառայեն այս նպատակին՝ մարդկանց յոյսը, վստահութիւնը, լաւատեսութիւնը վերականգնելուն: Եւ ես համոզուած եմ, որ, այո՛, մենք թեւակոխել ենք մի փուլ, որտեղ ամեն օր, ամեն ժամ, ամեն ամիս, ամեն շաբաթ պիտի լրջօրէն վերակառուցենք մարդկանց հաւատը եւ վստահութիւնը սեփական ապագայի, սեփական երկրի ապագայի եւ իրենց երեխաների ապագայի նկատմամբ, որ նրանք պիտի կապեն Հայաստանի Հանրապետութեան հետ»:* (Հետք, 7 Դեկտ. 2018)

Անկասկած որ շէնքերը հաւանաբար վերականգնուին օր մը, բայց ինչպէ՞ս վերականգնել վստահութիւնն ու լաւատեսութիւնը վաղուան նկատմամբ, երբ սփիւռքը ամէն օր կը լեցուի հայրենաթող մեր արեւակիցներով: Ինչպէ՞ս այս հաշմանդամ ազատամարտիկին յոյս պիտի ներշնչենք, երբ պատրաստ չենք գէթ ժամանակաւորապէս հոգալու անոր տարրական կարիքները, որպէսզի վաղուան նկատմամբ իր լաւատեսութիւնը վերականգնենք: Ինչպէ՞ս պիտի ամոքենք վշտացած սիրտը այդ փոքրիկ աղջկան, որ չի կրնար իր դասակիցներուն հետ նստիլ ճաշասեղանին շուրջ եւ վայելել նոյն խաչապուրիին կամ օրուան յատուկ ճաշը, երբ

անկարող է վճարել ուսուցիչին յատուկ սակագինը: Ո՞Վ Է ՄԵՂԱԻՈՐ...:

Եկեղեցին, այս պարագային Մայր Աթոռը, բարոյական մեծ պարտաւորութիւն ունի հանդէպ իր հաւատացեալներուն: Դադրեցուցէ՛ք ձեր անձնական փառքը հիւսող երկնասալաց եկեղեցիներու շինարարութիւնները: Հետեւեցէ՛ք երանելի սուրբին՝ Մեծն Ներսէս բարեգործ Հայրապետի օրինակին. շինեցէ՛ք անկելանցներ, ծերանցներ, պատսպարաններ, որբանոցներ, եւ ինչո՞ւ չէ նաեւ խոշտանգուած կանանց հոգեբուժարան-հագստանոցներ: Կարեկցանք ունեցէ՛ք ձեր ժողովուրդի գաւակներուն հանդէպ, որոնք նոյն ինքն եկեղեցին կը ներկայացնեն: Ձեր վանողական վարուելակերպով եւ աշխարհիկ կենցաղով հեռացուցած էք ժողովուրդը իր հայրերու հաւատքէն: Մրոտած էք եկեղեցւոյ վարկը, որ դարեր շարունակ մեր գոյութենական պայքարի ամենէն զօրաւոր կռուանն է եղած: Ո՞ՒՐ ԷՔ, ԵԿԵՂԵՑԱԿԱԿԱՆՆԵ՛Ր...

Ո՞վ պիտի ամոքէ մեր տառապեալ ժողովուրդին ցաւն ու վիշտը, եթէ ոչ դուք՝ «կրօնաւորներդ» որ, ծունկի եկած Միածնաէջ խորանին առջեւ, ուխտեցիք առաջի մարդկան եւ Աստուծոյ՝ ծառայել ձեր ժողովուրդին, եկեղեցւոյ ճամբով: Այդքան շո՞ւտ մոռցաք ձեր ուխտը: Այդքան շո՞ւտ ապականեցաք աշխարհիկ քառքերով եւ մոլորեցաք մամոնայապաշտութեամբ:

Մայր Աթոռի նիւթական կարողութիւնները՝ չըսելու համար անսահման, պիտի բաւականանամ ըսելու որ լայն են ստեղծելու եւ հաստատելու համար աստուածահաճոյ հաստատութիւններ, ուր պիտի կարենան պատսպարուիլ մեր անտէր եւ անօգնական ընտանիքները: **Հոն ուր կամք կայ, այնտեղ կայ միջոց:** Պետք չէ մոռնալ, որ այդ կարօտեալ ազատամարտիկի փոքրիկ դուստրը վաղը պիտի ըլլայ այն հայ մայրը՝ որ ծնունդ պիտի տայ նո՛ր ազատամարտիկի, կամ ազատամարտիկներու՝ իրենց հայրենիքը պաշտպանող: Ինչպէ՞ս պիտի կարենանք պատրաստել այդ ապագայ սերունդը, երբ անոր նկատմամբ ո՛չ մէկ կարեկցանք ունինք այսօր:

Կը դժուարանամ ըսելու, բայց նաեւ պիտի չուզէի ճշմարտութիւնը քողարկել: Այսօր դժբախտաբար մեր եկեղեցիներէն խոյս տուած է քրիստոնէական ոգին եւ Հայց. եկեղեցին տագնապի շրջանէ մը կ'անցնի: Ամէն ինչ դարձած է մեքենականութիւն, նոյնիսկ մեր արարողութիւններն ալ՝ անհրապոյր ներկայացում մը, ուր շատ յաճախ աղօթքները կ'արտասանուին առանց ապրումի, որովհետեւ պարզապէս աւանդապաշտութիւնն է մտած մեր եկեղեցիներէն ներս, պարպելով մեզ հոգեւոր բոլոր ապրումներէն:

Ահաւասիկ այս հոգեւոր սնանկութիւնն է, որ եկեղեցին դարձուցած է անհաղորդ իր հաւատացեալներու կարիքներուն, եւ վերածուած սովորական շահադիտական մէկ հաստատութեան: ճիշդ այս պատճառով յաճախ կը կրկնենք, որ բոլոր ժամանակներէ աւելի՝ ԱՅՍՕՐ պահանջը կայ բարեկարգութեան: Դժբախտաբար մեր հանրային-հասարակական կեանքն է որ կը քայքայուի եւ մենք քար անտարբերութեամբ կը

դիտենք համազգային նուիրականութիւններու, օրէնքի, կանոնագրութեանց հանդէպ գործուած անպատկառ խախտումները: Ներելի չէ մեր այս դասալքութիւնը. անկեղծութեան եւ քաջութեան պակասը կայ ամէնուրեք: Մեր ազնիւ ժողովուրդի առօրեայ կեանքէն բխող հրատապ հարցերն ու կարիքները անյապաղ լուծման կը կարօտին: Սիրելի՛ ընթերցող, պիտի բերե՞ս քու բաժինդ....:

